


ինքը երբեք պիտի չճոռնար, թէ թալէաթը եւ իր ընկերները իրեն բան մը պարտ մնացած են:

Թալէաթը վճարեց իր պարտը եւ այլեւ

չկայ. իսկ հայ ժողովուրդը կ'ապրի ու պիտի ապրի աւելի լաւ, քան այսօր, իր կամքին ու կորովին տակ արորելով ամէն սպառնալիք:

(Շարունակելի)



ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ (ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

Գրեց՝ ԱՐՏ. ԱՐԵՂԵԱՆ

I

«Հայրենիք» ամսագրի օգոստոսի եւ սեպտեմբերի (1927 թ.) համարներում «Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան» վերնագրի տակ ուրուագծեցինք մեր ըմբռնումները ինքնուրոյն հայ պետականութեան ներքին քաղաքականութեան մի շարք խնդիրների շուրջը: Ներկայ յօդուածը նպատակ ունի արծարծել նման հարցեր մեր արտաքին քաղաքականութեան վերաբերեալ: Յատկապէս նկատի ունինք մեր եւ մեր հարեւանների փոխադարձ յարաբերութիւնները շօշափող մի քանի կենսական հարցեր:

Որչափ յաճախ արծարծուին, որչափ բազմակողմանի լուսարանութեան առարկայ դառնան դրանք, այնչափ լաւ՝ հայ քաղաքական մտքի զարգացման համար: Հասկանալի է, որ այս տողերում արծարծուող առարկաների լուսարանութիւնները դիտուելու են որպէս սոսկ անհատական ըմբռնումներ: Թերեւս դժբանցից մէկը կամ միւսը եւ կամ շատերը համարուին վիճելի ու ժխտելի, յամենայն դէպս նրանց արծարծումը մեզ թւում է կարեւոր:

* * *

Արտասահմանի հայ մամուլը եւ մասնաւորապէս Դաշնակցական թերթերը վերջին ամիսների ընթացքում հրապարակ հանեցին քաղաքական մի քանի հրատապ հարցեր, որոնք կենսական, առաջնակարգ նշանակութիւն ունին մեր երկրի ներքին ու արտաքին զարգացման համար, եւ որոնք շօշափում են մինչեւ իսկ նրա գոյութեան հիմքերը:

Դրանք են՝

1. Արդի Հայաստանի սահմանների եւ ազգաբնակչութեան,
2. Համաքուրանական կամ համաքրական,
3. Կովկասեան ժողովուրդների — հայերից դուրս միւսների՝ վրացիների, թաթարների եւ լեռնականների — Բաղափական միութեան խնդիրները:

Անտարակոյս կան նաեւ ուրիշները, յարակիցները, դրանք եւս այս կամ այն չափով ազդերս ունին վերոյիշեալ երեք հարցերի հետ:

Եթէ կ'ուզէք, բոլոր այդ խնդիրներն էլ նոյնանո՛ւմ են իրեց հիմքում, հարկաւ մե՛զ համար, Հայաստանի համար, մե՛ր քաղաքական շահերի տեսակէտից: Ուստի եւ, մեր կարծիքով, զժուար իսկ է՝ իրարուց դատել նրանց, քննութեան առնել տարբեր շրջանակներում: Անկարելի է մէկի բաւարար — եթէ ոչ սպառիչ — լուսարանութիւնը տալ, առանց միաժամանակ միւսների արժատին մօտենալու:

Մրանով էլ բացատրելու է այն հիմնական աբսուրդ, որով ըստ իս տառապում է վերոյիշեալ խնդիրներին նուիրուած մեծ ու փոքր աշխատութիւնների, լրագրական խմբագրականների եւ յօդուածների մեծ մասը: Մինչ նրանք մի կողմից բաւականաչափ խորութեամբ եւ ցանկալի բազմակողմանիութեամբ վերլուծում են առաջադրուած խնդիրները, ենթարկում նըրանց ուժեղ քննադատութեան, եւ սակայն միւս կողմից մեծապէս թերանում են՝ երբ հերթը գալիս է հետեւութիւններին, երբ անհրաժեշտօրէն հարկ է զգացում ցուցադրել սեփական, որդեգրելիք քաղաքականութեան